Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

18.08.2021թ. **ք. Իջևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի Տավուշի տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող՝ արդարադատության ավագ լեյտենանտ Լ. Եսայանս ուսումնասիրելով 18.08.2021թ-ին վերսկսված թիվ 04182837 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 30.03.2018թ-ին տրված թիվ ՏԴ/0046/02/18 կատարողական թերթի համաձայն պետք է Թագուհի Ավետիքի Ալիխանյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 324 216 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ: Բռնագանձում տարածել վարկային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Ով 020 17 00472 ակտում նշված ոսկյա իրերի վրա:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Պահանջատերը հայտնում է, որ թիվ ՏԴ/0046/02/18 կատարողական թերթով 24.03.2021թ-ի դրությամբ պարտապանի պարտքը կազմում է 324 216 ՀՀ դրամ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Թագուհի Ավետիքի Ալիխանյանին պատկանող գրավի առարկա հանդիսացող ոսկյա իրերը <<ՌԱՖՕԼ>> ՍՊԸ-ի կողմից գնահատվել են 230 550 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկության մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3, 35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Թագուհի Ավետիքի Ալիխանյանին պատկանող, գրավի առարկա հանդիսացող ներքոնշյալ ոսկյա զարդերը՝

h/h	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1.	Ոսկյա մատանի, 500 հարգի ոսկուց, օգտագործված, 2.0 գրամ	**29 400 ՀՀ դրամ**	**22 050 ՀՀ դրամ**	**Մեկ հատ**
2.	Ոսկյա շղթա՝ 580 հարգի ոսկուց, օգտագործված, 3.3 գրամ	**56 100 ՀՀ դրամ**	**42 075 ՀՀ դրամ**	**Մեկ հատ**
3.	Ոսկյա շղթա՝ 580 հարգի ոսկուց, օգտագործված, 4.0 գրամ	**68 000 ՀՀ դրամ**	**51 000 ՀՀ դրամ**	**Մեկ հատ**
4.	Ոսկյա թևնոց՝ 580 հարգի ոսկուց, օգտագործված, 4.1 գրամ	**69 700 ՀՀ դրամ**	**52 275 ՀՀ դրամ**	**Մեկ հատ**

Digitally signed by
YESAYAN LEVON
3104870306
Date: 2021.09.13
13:53:03 AMT

5.	Ոսկյա ականջող վնասված՝ 500 հարգի ոսկուց, 0.5 գրամ	**7 350 ՀՀ դրամ**	**5 512.5 ՀՀ դրամ**	**Մեկ զույգ**

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, աճուրդի էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Հարկադիր Կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **harkadir.achurd.am** կամ **www.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ է սահմանվում՝ «07» հոկտեմբեր 2021թ.

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն՝ Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ՝
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ **Լ. ԵՍԱՅԱՆ**